

# ՄԱԼԼԻ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարգիս Ղազարյան  
Հեռախոս՝ +374.93. 68 77 43

Մալլի գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Մելիմագետի ափին, ծովի մակերևույթից 1540-1640 մ բարձրության վրա: Մարզկենտրոնից հեռու է 20 կմ, մայրաքաղաքից՝ 130 կմ: Կլիման չոր է ու ցամաքային, հաճախակի կրկնվող երաշտներով, որից տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը:

Մալլի գյուղը հիմնվել է շատ հին ժամանակներում: Այդ մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Միսիական» գրքում, որում հիշատակված է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ Հայաստանի տարբեր վայրեր քրիստոնեության քարոզման նպատակով ուղարկված քարոզիչներն իջևանել են Մալլի գյուղում: Գյուղի տարածքը շատ է դուր եկել նրանց, որտեղ էլ թաղվել են սրբերից մեկի՝ Սուրբ Մամասի մասունքները, որի վրա հետագայում կառուցվել է Սուրբ Մամասի եկեղեցին: Այն գտնվում է գյուղից 600-700մ հեռավորությամբ՝ 1652 մ բարձրության վրա: Այն իրենից ներկայացնում է միանավ հորինվածքով մի եկեղեցի, որից մի քանի մետր հեռավորության վրա է գտնվում ավելի փոքր չափեր ունեցող և մատուռ հիշեցնող մյուս եկեղեցին: Այս երկուսի միջանկյալ հատվածում գտնվում է երրորդը՝ ճարտարապետությամբ երկրորդին նման: Վանքի հիմնադրումը կապվում է Սուրբ Մամաս ճգնավորի մասունքներն այստեղ ամփոփելու հետ: Վանքի մերձակայքում գտնվող գերեցմանոցում կան 12-16-րդ դարերով թվագրվող ավելի քան երկու տասնյակ խաչքարեր ու բազմաթիվ տապանաքարեր, որոնցից մի քանիսը արձանագիր են: Գյուղից շուրջ 1 կմ հեռավորության վրա գտնվող Մալլիի այգիներ կոչվող տարածքում են գտնվում երեք գեղաքանդակ խաչքարեր: Դրանցից երկուսն արձանագիր են:

Նոր Մալլի գյուղում պատմամշակութային կառույցներ ու հուշարձաններ գրեթե չկան, սակայն դրանք բավականին մեծ թիվ են կազմում նույնանուն հին բնակատեղիում: Գյուղի ներկա բնակչության մեծամասնությունը գաղթել է Խոյից և Սալմաստից:

Բնակչությունն զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Տարածքում մշակվում են բոլոր այն գյուղատնտեսական կուլտուրաները, որոնք տարածված են Հայաստանում: Գյուղի հիմնական խնդիրը խմելու և ոռոգման ջրով ապահովելու հարցն է: Քանի որ ոռոգման ջրի մայր առուն անցնում է ավազուտների և հրաբխային նստվածքների միջով, ջուրը տեղ է հասնում մեծ կորուստներով: Գյուղում կա 1 պանրագործարան և 1 մրգի սառնարան: Գյուղն ունի հիմնական դպրոց, սպորտային բաց հրապարակ, վարչական շենք, բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Մալլի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 20 հուշարձան: